ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ք. Եղեգնաձոր

<< 02 >> Մարտի 2015թ N 12

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2016-2018 ԹԹ. ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2.4-րդ և 3-րդ մասերի, ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ - 728 հրամանագրի 1.6-րդ կետի, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1253-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից կատարված ուսումնասիրությունները, հաշվի առնելով առավել վատ տեխնիկական վիճակում գտնվող խմելու ջրատարների հիմնանորոգմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կատարված ուսումնասիրության արդյունքները .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարզի 2016-2018 թթ բյուջետային տարվա հայտերի ծրագրերում ընդգրկել ներքոհիշյալ օբյեկտները՝ համաձայն հավելվածի .

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Հովսեփյանի վրա:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ